Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՒԶԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱԼՈՒՄՅԱՆ Տ. Զ., ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Վ.Ս.
Հ. Թումանյանի անվան Վանաձորի պետական մանկավարժական համալսարան,
Վանաձոր, Տիգրան Մեծի 36
Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան
e-mail t-malumyan@mail.ru
vskarapetyan@mail.ru

Հոդվածում քննարկվում են ավագ նախադպրոցականների հուզական դրսևորումները՝ համապատասխան արտահայտչաձևերով: Հույզերի արտահայտչանշանների գրաֆիկական պատկերման մեթոդի և Ռ.Դորկի ու Վ.Ամենի տագնապայնության թեստի միջոցով ցույց են տրվում տարբեր իրավիճակներում հուզական դրսևորումների ձևավորման նպատակահարմարությունը հուզական վիճակների գնահատման և կարգավորման գործընթացում: Հուզական դրսևորումները ուսումնասիրվել են երկու տեսանկյունով՝ 1) առանձին հատկանիշների ճանաչողության և 2) տվյալ իրավիճակում համապատասխան հուզական (ուրախություն, տխրություն, վախ, զայրույթ, զարմանք) վիճակի դրսևորման կողմնորոշման:

Բանալի բառեր. հուզական ոլորտ, հուզական վիճակներ, հուզական արտահայտչանշաններ, ավագ նախադպրոցական, միջանձնային հարաբերություն-ներ:

Ներկայացված է խմբագրություն 07.03.2018

Ավագ նախադպրոցականների ծնողների և դաստիարակների հետ ունեցած նախնական փորձերի և հարցազրույցի ընթացքում արձանագրվել է, որ պարապմունքների ընթացքում և՝ «երեխա-երեխա», «երեխա-ընտանիքի անդամներ», «երեխա-դաստիարակ» միջանձնային հարաբերություններում երեխաները հիմնականում չեն կարողանում լիարժեք արտահայտել իրենց հուզական վիճակները, որոնք հաճախ ինքնաբուխ են և իրավիճակին անհամապատասխան: Դեռ ավելին, մանկական հեքիաթների և պատմվածքների կերպարների հուզական վիճակները չեն ընկալվում և չեն գնահատվում, որով երեխաների մեջ չեն ձևավորում տվյալ կերպարի ամբողջական պատկերը, այլ միայն ավելի շատ ուշադրություն են դարձվում կերպարների վարքային առանձնահատկություններին [1]: Քանի որ ուրախությունը, տխրությունը, վախը, զարմանքը և զայրույթն ավելի հաճախ են արտահայտվում երեխաների վարքում, ուստի անհրաժեշտ է դրանց ուսումնասիրությունը դիտարկել կոնկրետ հատկանիշներով (աչքեր, հոնքեր, բերան):

Ստորև աղյուսակի տեսքով ներկայացվում են հիմնական հուզական վիճակներին բնորոշ արտահայտչաձևերը և երեխաների թվաքանակը, ովքեր գնահատել են տվյալ արտահայտչաձևի առկայությունն իրենց հուզական դրսևորումներում:

Աղյուսակ 1. Երեխաների ընդհանուր թվաքանակի (30) բաշխվածությունը՝ ըստ հուզական վիճակների արտահայտչաձևերի

Հուզական վիճակներ	Հուզական վիճակների արտահայտչանշաններ					
	աչքեր	Երեխաների թվաքանակ (30)	հոնքեր	Երեխաների թվաքանակ (30)	բերան	Երեխաների թվաքանակ (30)
ուրախություն	+	4	+	3	+	5
տխրություն	+	4	+	3	+	4
վախ	+	3	+	2	+	2
զայրույթ	+	2	+	3	+	2
զարմանք	+	3	+	4	+	3
		Ընդամենը՝ 16 երեխա		Ընդամենը՝ 15 երեխա		Ընդամենը՝ 16 երեխա

Ինչպես երևում է աղյուսակից երեխաների ընդհանուր թվաքանակի (30) պարագայում կստանանք 47 տվյալ, քանի որ միևնույն երեխան կարող էր միաժամանակ ճիշտ նշել մի քանի հատկանիշեր: Եթե փորձենք 30 երեխայի համար դիտարկել վերը թվարկած հույզերի բոլոր դրսևորումները, ապա կստանանք 450 տարբերակ (5.3.30), որը կկազմի բոլոր դիտարկումների 10.4 տոկոսը: Արդյունքում ստացվում է, որ երեխաների մեծ մասը բավարար չափով չի կարողանում գնահատել հուզական վիճակների արտահայտչաձևերը: Պարզվում է նաև, որ երեխաները միջանձնային հարաբերություններում ավելի շատ են արտահայտում իրենց ուրախությունը, տխրությունը, զարմանքը և վախը, որոնք ավելի հաճախ են դրսևորվում երեխաների հետ տարվող պարապմունքներում, սակայն նրանք չեն կարողանում գնահատել դիմացինի հուզական վիճակը, ինչպես նաև ամփոփ ներկայացնել տվյալ հուզական վիճակին բնորոշ բոլոր արտահայտչաձևերը [2]:

Բնականաբար հարց է ծագում, թե ինչպես կարելի է երեխաներին սովորեցնել տվյալ իրավիճակում համարժեք արտահայտել կամ դրսևորել իրենց հուզական վիճակները այնպես, որ հասկանալի և գնահատելի լինեն նաև դիմացինի համար: Վերը նշված հարցին պատասխանելու համար մի քանի մանկապարտեզում կազմակերպել ենք պարապմունքներ ավագ նախադպրոցական տարիքի 40 երեխայի հետ, նպատակ ունենալով փորձարկել մեթոդիկաներ, որոնք հնարավորություն են տալիս հույզերի արտահայտչանշանների միջոցով երեխաներին սովորեցնել հասկանալ տվյալ հույզի նշանակությունը և դրսևորման առանձնահատկությունները տվյալ իրավիճակում:

1. **Հույզերի արտահայտչանշանների գրաֆիկական պատկերման մեթոդ**: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ էկրանին ցույց են տրվում երեխայի համար առավել տիպական հուզական վիճակները՝ խոշորացված և լավ տեսանելի չափերով:

Առաջին փուլում դաստիարակը նկարի օրինակով բացատրում է, թե ինչպես է ուրախությունն արտահայտվում դեմքի վրա [3]: Քանի որ երեխայի համար մի քանի հատկանիշներով հույզերի ընկալումը բարդ գործընթաց է, ուստի առանձին-առանձին մատնանշվում են, օրինակ, ուրախության միմիկական դրսևորումները: Երեխաներն այն ընկալելով և ներքայնացնելով մտավոր պլանում, այնուհետև բարձրաձայնում են իրենց տեսածը և փորձում են նույնը պատկերել առարկայական պլանում՝ (սեղանին փռած ավազի վրա կամ գունավոր մատիտներով թղթի վրա)՝ ցուցադրելով կոնկրետ այն մեկ հատկանիշը, որը բնորոշ է տվյալ հուզական վիճակին [4]: Առանձին-

առանձին միևնույն գործողությունը հերթականությամբ կատարում են յուրաքանչյուր արտահայտչանշանի հետ, որը հնարավորություն է տալիս աստիճանաբար գիտակցել տվյալ հուզական վիճակին բնորոշ բոլոր հատկանիշները: Վերջնարդյունքում երեխաները դարձյալ անվանում են հույզը, թվարկում նրա բնորոշող արտահայտչական նշանները:

Երկրորդ փուլում պայմաններ են ստեղծվում, որ երեխան արտահայտի այդ հույզը հայելու առջև կանգնած վիճակով, յուրաքանչյուր անգամ ուղղումներ մտցնելով տվյալ արտահայտչաձևում, շտկելով հնարավոր սխալները և կառավարելով սեփական գործողությունները:

Երրորրդ փուլում երեխան ավազի կամ բրնձի հատիկների միջոցով ամբողջական տեսքով նկարում է տվյալ հուզական վիճակը: Նմանատիպ գործողություններ կատարվում է յուրաքանչյուր նախադպրոցականի հետ: Կախված երեխայի անհատական առանձնահատկություններից ժամանակի տրամադրումը եղել է 40-60 րոպե: Քանի որ հուզական վիճակները դիտարկում ենք միջանձնային հարաբերությունների շրջանակում, ուստի անհրաժեշտ ենք համարել երեխայի կողմից դրսևորվող յուրաքանչյուր հուզական վիճակ ներկայացնել հասակակակիցներին և մեծահասակներին, նպատակ ունենալով պարզել, թե դիմացինի կողմից ինչպե՞ս են գնահատվում տվյալ հուզական վիճակի արտահայտչաձևերը:

2. **Տագնապայնության թեստ** (Ռ.Դորկի, Վ.Ամեն) [5]

Այս մեթոդիկայի կիրառման միջոցով պարզել ենք 30 երեխայի հուզական հարմարվողականությունը հուզական տարաբնույթ իրավիճակներին, որը հնարավորություն է տալիս պարզելու երեխայի վերաբերմունքը կոնկրետ իրավիճակին և բացի դրանից, լրացուցիչ նյութ է տրամադրում ինչպես երեխայի և հասակակիցների, այնպես էլ չափահաս մարդկանց հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ: Երեխաներին տրամադրվել է 14 նկարից բաղկացած փորձարարական նյութ, որոնցում նկարագրվում են կոնկրետ իրավիճակներ, իսկ նկարի ներքևում պատկերված է մեծահասակի կամ նախադպրոցականի անորոշ դեմքը: Երեխաներին սովորեցնում ենք ընտրել մեծահասակի կամ նախադպրոցականի դեմքի կոնկրետ այն արտահայտչաձևերը, որոնք համապատասխանում են պատկերված իրավիճակին: Քանի որ երեխաները տիրապետում են հուզական վիճակների կոնկրետ արտահայտչաձևերին, ուստի տվյալ պարագայում նրանց խնդիրն է՝ ընկալելով նկարի պատկերները կամ նայելով նախադպրոցականի և մեծահասակի դեմքին՝ ընտրել առաջարկվող տարբերակներից այն մեկը, որը բնորոշ է տվյալ իրավիճակում դրսևորվող հուզական իրավիճակին:

Պարապմունքներն անցկացվել են հավասար թվաքանակով նախադպրոցական տարիքի երեխաների հետ, ովքեր արդեն ծանոթ են հուզական վիճակներին և դրանց արտահայտչաձևերին: Մեթոդիկայի կիրառման արդյունավետությունը մեծամասամբ պայմանավորված է իրավիճակների համարժեք գնահատմամբ, որից էլ հետևում է հուզական արտահայտչաձևերի համարժեք ընտրությունը: Երկու մեթոդիկաների կիրառման արդյունավետությունը ստուգելու համար կրկին ուսումնասիրվել է հուզական վիճակների արտաչաձևերի առկայությունը, որոնց արդյունքները ստորև ներկայացվում է աղյուսակի տեսքով:

Աղյուսակ 2. Երեխաների թվաքանակի բաշխվածությունը՝ ըստ հուզական վիճակների արտահայտչաձևերի՝ հատուկ պարապմունքների կազմակերպման արդյունքում

Հուզական վիճակներ	հուզական վիճակների արտահայտչանշաններ					
	աչքեր	Երեխաների թվաքանակ	հոնքեր	Երեխաների թվաքանակ	բերան	Երեխաների թվաքանակ
ուրախություն	+	20	+	25	+	50
տխրություն	+	30	+	35	+	25
վախ	+	30	+	15	+	25
զայրույթ	+	25	+	20	+	25
զարմանք	+	25	+	30	+	25

Վիճակագրական տվյալների միջին վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ վերը նկարագրված մեթոդիկաների համատեղ կիրառման պայմաններում նշանակալիորեն փոխվում են երեխաների հուզական ոլորտին վերաբերող էական պատկերացումները՝ ի հաշիվ դրանց արտահայտչաձևերի ճանաչման, իսկ հետագայում նաև կոնկրետ իրավիճակներում դրանց կիրառման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Изотова Е.И. Игра и развитие личности дошкольника, изд. АПИ,2003.-152с
2. Минаева В. М. Развитие эмоций дошкольников. Занятия. Игры Москва; АРКТИ,2001,48с
3. Злобин А. Т. К классификации эмоций. Вопросы психологии,1991, 4, С. 96-99
4. Гальперин П. Я. Типы ориентировки и типы формирования действий и понятий, доклады АПН РСФСР, 1998, N2, С. 75-78
5. Максутова А. А., Кедярова Е. А., Русских Н. И., Антипина С. В. Комплексная диагностика личности дошкольника, учебное пособие.-Иркутск, 2012,184с

РЕЗЮМЕ

ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИЗУЧЕНИЕ ЭМОЦИОНАЛЬНЫХ ПРОЯВЛЕНИЙ СТАРШИХ ДОШКОЛЬНИКОВ

МАЛУМЯН Т.З.

КАРАПЕТЯН В.С.

В статье обсуждаются эмоциональные прояления с соответствующими типовыми выражениями старших дошкольников. С помощью методик графического изображения эмоциональных выражений и теста тревожности Р. Дорки и В. Амена показаны целесообразность формирования эмоциональных проявлений в разных ситуациях, в процессе оценивания и регулирования эмоциональных состояний. Эмоциональные проявления изучались в двух аспектах: а) когнитивном и б) ситуативном, когда в соответствии с ситуацией выражаются адекватные эмоции: радость, печаль, страх, гнев, удивление. Применение этих методик позволяет расширить понимание места и ролью эмоций в повседневной жизни.

SUMMARY

EXPERIMENTAL STUDY OF SENIOR PRESCHOOLERS' EMOTIONAL

T.Z.MALUMYAN

V.S.KARAPETYAN

The article discusses the emotional manifestations of senior preschoolers with appropriate expressions. The method of graphic representation of emoticons and R. Dorky and V. Amy's test shows the expediency of forming emotional manifestations in different situations, in the process of emotional state assessment and regulation. Emotional manifestations have been studied in two ways: cognition, knowledge of individual traits, and secondly, orienting to the corresponding emotional response, joy, dullness, fear, anger, amazement.